ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ
ՄԱՐԶՊԵՏ

ք. Եղեգնաձոր, Շահումյան 5 **Հեռախոս (+374010) 28 74 01, (+3740281) 2 25 22**

,, ,, . ,, ,, . 2020թ. N _____ **Ֆաքս (+374010) 28 18 32**

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
ԷԼԻՆԱ ԳՅՈՒՐՋՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Գյուրջյան

Ի պատասխան Ձեր 15.01.2020 թվականի հարցման, տեղեկացնում եմ՝

1.ա ՀՀ Վայոց ձորի մարզպետարանը չունի համապատասխան կահավորում, հատուկ կարիքներով անձանց հարցումների պատասխանները՝ կույրերի դեպքում (բրայլյան գրերով), խուլերի դեպքում (ձայնային տեղեկատվության վերծանման միջոցով) նրանց մատչելի ձևաչափով տրամադրելու համար:

բ. տեղեկատվության տրամադրումը կազմակերպվում է ոչ հատուկ ձևաչափով,

գ. հատուկ ձևաչափով տեղեկատվության փոխարկման-տրամադրման վերաբերյալ կարգ չի մշակվել, փոխարկման համապատասխան միջոցներ չունենալու պատճառով:

«Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության իրավական, տնտեսական ու կազմակերպական հիմունքները, հաշմանդամներին հանրապետության մյուս քաղաքացիների հետ համահավասար հնարավորություններ ապահովելու նպատակով նրանց իրավունքների և ընդունակությունների իրականացման համար առավել բարենպաստ պայմանների և արտոնությունների տրամադրման պետական քաղաքականության հիմնադրույթները:

Օրենքի 16-րդ հոդվածով սահմանվում է հաշմանդամների՝ տեղեկություններ ստանալու ազատության ապահովումը, մասնավորապես՝

«<u>Պետությունն ապահովում է հաշմանդամների տեղեկություններ ստանալու ազատությունը:</u>

Պետության կողմից ժեստերի լեզուն ընդունվում է որպես անձնական շփման, ուսման և թարգմանչական ծառայությունների տրամադրման միջոց:

Տեսողության խանգարումներ ունեցող անձանց համար երաշխավորվում է Բրայլի համակարգով կատարվող ուսուցման ապահովումը, լսողական միջոցների և խոշոր տառատեսակների մատչելիությունը՝ ներառյալ ուշ տարիքում տեսողությունը կորցրած անձանց Բրայլի համակարգով լրացուցիչ ուսուցումը:
Մտավոր թերություններ ունեցող անձանց համար կազմակերպվում է լեզվի մատչելի ըմբռնման ուսուցման համակարգ:
Խոսակցական խանգարումներով անձանց տրամադրվում են հաղորդակցման տեխնիկական միջոցներ:
Հաշմանդամների հասարակական կազմակերպությունները սեփական միջոցների հաշվին և կանոնադրական խնդիրների շրջանակներում կարող են տրամադրել նաև անձնական շփման և հաղորդակցման այլ միջոցներ:
Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հիմնած հեռուստառադիոընկերությունները օրենքով սահմանված եթերաժամանակով ապահովում են մանկական և լրատվական հեռուստահաղորդումների ժեստերի լեզվով թարգմանությամբ հեռարձակումը:»:
Վերոգրյալից հետևում է, որ հաշմանդամների, մասնավորապես տեսողության խանգարումներ ունեցող անձանց համար երաշխավորվում է Բրայլի համակարգով կատարվող ուսուցման ապահովումը, և, որպես սոցիալական օգնություն, յուրաքանչյուր տարի պետական բյուջեով նախատեսվում են միջոցներ հատուկ տառատեսակներով գրքերի տպագրության, «Խոսող գրքերի» ձայնագրության, ինչպես նաև ուշ տարիքում տեսողությունը կորցրած անձանց Բրայլի համակարգով լրացուցիչ ուսուցման համար:
Հայաստանի Հանրապետությունը, որպես «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի մասնակից պետություն, համաձայնվել է պաշտոնական հարաբերություններում ընդունել շարժուձևերի լեզվի, Բրայլի համակարգի, հաղորդակցության ուժեղացուցիչ ու այլընտրանքային միջոցների, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց նախընտրած՝ հաղորդակցության այլ մատչելի միջոցների, տեսակների ու ձևաչափերի օգտագործումը և նպաստել դրան: Սակայն ներկայումս մշակված չէ միասնական քաղաքականություն նշված հարցին լուծում տալու համար, ուստի ՀՀ Վայոց ձորի մարզպետարանը չունի հաշմանդամություն ունեցող անձանց մատչելի ձևաչափով տեղեկատվություն տրամադրելու մշակված կարգ:

Նշված խնդրի լուծման նպատակով պետության կողմից իրականացվում են նպատակային քայլեր, ինչպես ՀՀ կառավարության կողմից 2019 թվականի սեպտեմբերի 30-ին ընդունված թիվ 1292-Լ որոշումը, որով հաստատվել է հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2020 թվականի տարեկան ծրագիրը: Ըստ նշված որոշման 2-րդ հավելվածի 2-րդ կետի 2020 թվականի ընթացքում նախատեսվում է հաշմանդամություն ունեցող անձանց համար ֆիզիկական միջավայրի, տրանսպորտային միջոցների, տեղեկատվության մատչելիության իրավունքի ապահովում,

մասնավորապես՝ ծառայություն մատուցող մարմիններում հատուկ տեսահաղորդակցման համակարգի ներդրմանն ուղղված հետազոտությունների իրականացում, ծրագրի մշակում, որն ուղղված է լսողության խնդիրներով հաշմանդամություն ունեցող անձանց ծառայություններ ստանալու նպատակով հաղորդակցման մատչելիության ապահովմանը: Իսկ տեսողության խնդիրներ ունեցող
անձանց համար նախատեսվում է պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների մակետների ստեղծում՝ համար մշակութային ժառանգությանը հաղորդակցվելու հասանելիության ապահովման շրջանակներում:

2. Տեղեկատվություն տրամադրելու նպատակով ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի պաշտոնական կայքէջի (http://vdzor.mtad.am/) համապատասխան բաժնում՝ (http://vdzor.mtad.am/Kargeviravunq1/) տեղադրված է տեղեկատվություն ստանալու իրավունքը և կարգը:
3. Պետական և հասարակական անվտանգությանը, հասարակական կարգին, միջավայրին, անձանց սեփականությանը սպառնացող վտանգին վերաբերող տեղեկատվությունը հանրությանը իրազեկվում է մարզպետարանի պաշտոնական կայքէջի և մարզպետարանի ֆեյսբուքյան էջի միջոցով:
4.Համապատասխան տեղեկությունները հրապարակվում են ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի պաշտոնական կայքէջում և ֆեյսբուքյան էջում, ինչպես նաև ըստ անհրաժեշտության՝ համայնքների պաշտոնական կայքէջերում և ֆեյսբուքյան էջերում:
Այն տեղեկությունները, որոնք վերաբերում են ազգաբնակչության տարբեր սոցիալական խմբերին, որոնց համար հասանելի չէ էլեկտրոնային եղանակով տեղեկատվություն ստանալը, դրանք փակցվում են բնակավայրերում առկա տեղեկատվական վահանակներին:
5. ՀՀ Վայոց ձորի մարզպետը յուրաքանչյուր հաջորդ տարվա սկզբին իր գործունեության մասին ներկայացնում է տարեկան հաշվետվություն, որը տեղադրվում է մարզպատարանի պաշտոնական կայքէջում, էլ.հասցեն՝ (http://vdzor.mtad.am/reports/) :
Մարզպետը նաև իր գործունեության վերաբերյալ տարին առնվազն երկու անգամ հանդես է գալիս մամուլի ասուլիսով: Հանրությանն այդ մասին տեղեկացնելու նպատակով դրանց վերաբերյալ լուսաբանական նյութեր են տեղադրվում ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի պաշտոնական կայքէջի համապատասխան բաժիններում, նյութեր են հրապարակվում Հայաստանի Հանրապետություն օրաթերթում, մարզային Վարդաձոր ամսաթերթում, Վայոց ձորի թեմի պաշտոնական կայքէջում:
6. Տեղեկատվության ազատության ապահովման պատասխանատուի վերաբերյալ տվյալները տեղադրված են ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի կայքէջում, էլ. հասցե՝ http://vdzor.mtad.am/Teghpat1/:

7. Քաղաքացիական ծառայողների մրցույթներն անցկացվում են «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով և ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին» N 1554-Ն որոշմամբ սահմանված կարգով:

8. Ձեր նշված տեղեկությունները՝ մրցութային փաթեթը, հասարակական կազմակերպություններին և զանգվածային լրատվամիջոցներին տրամադրվում է օրենսդրությամբ սահմանված կարգի համաձայն՝ հաշվի առնելով մարդու անձնական տվյալների գաղտնիությունը պահպանելու օրենսդրական դրույթը:

Недействительная подпись

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հարգանքով՝ Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550 **Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Կատարող՝ Ս.Մարգարյան
հեռախոս՝ (0281) 2 40 03